ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1559-Ա « 13 » նոյեմբերի 2026 թ.

«ԵՔ-ԲՄԱՊՁԲ-27/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կարգավիճակով գործող մսուր-մանկապարտեզների տնօրենների կողմից ներկայացված 2027 թվականի կարիքների համար սննդի փաթեթի գնման հայտերը.

1. Ձևավորել «ԵՔ-ԲՄԱՊՁԲ-27/1» ծածկագրով բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողով և հաստատել դրա ստորև ներկայացվող անհատական կազմը.

Գ. Հայրապետյան	«Երևանի թիվ 62 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն /հանձնաժողովի նախագահ/
Հ. Հայրապետյան	«Երևանի թիվ 126 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն
Ի. Ավագյան	«Երևանի թիվ 44 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն
Շ. Ղևոնդյան	«Երևանի թիվ 86 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն
Կ. Աղաջանյան	«Երևանի թիվ 109 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն
Ա. Խաչատրյան	«Երևանի թիվ 15 մսուր-մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի տնօրեն

2. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար նշանակել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության ապրանքների գնումների բաժնի պետ Ի. Եղիազարյանին:

3. Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարին՝ բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել սույն կարգադրությունն ուժի մեջ մտնելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում (ք. Երևան, Արգիշտիի փողոց հ.1, հ.128 սենյակ):

4.Բաց մրցույթ ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

5. Սույն կարգադրության կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության պետի վրա:

6.Սույն կարգադրության կատարման հսկողությունն իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարը:



ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ